ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1917 թ. մարտ-նոյեմբեր)

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անցնելով իշխանության գլուխ՝ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունն իր տարածքային սեփականությունը հռչակեց Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով Օսմանյան կայսրությունից գրավված շրջանները, ուստի և գերադասեց դրանց անմիջական կառավարումը հանձնել տեղական իշխանությանը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեին, որը պետք է կարգ հաստատեր «ոչ միայն Անդրկովկասում, այլև տնօրիներ այդ վայրերի քաղաքացիական կառավարումը»[1]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը հայության մոտ այն հույսերն արթնացրեց, որ ռուսական բանակի Կովկասյան ճակատի հետադիմական սպայակույտը նոր խարդավանքների չի ենթարկի ազգային կյանքով ապրող գրավված վայրերի արևմտահայությանը, քանի որ «արևմտահայության մեջ նկատվում էին փետրվարյան հեղափոխության միջոցով ազգային և սոցիալական ազատագրման հույսի նոր ուղիներ տեսնելու միտումներ»[2]:

Աստիճանաբար վերանում է ցարական նախկին պաշտոնյաների թշնամական վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ: Ասպարեզից հեռանում են կառավարության լավ ու վատ զորավարները և կառավարիչները՝ իրենց Չեռնոզուբովներով, Մդիվանիներով և Վարանովներով, «որովհետև ըստ իրենց ասածին իրենց հացը կտրած է ...»[3]: «Վան-Տոսպ»-ը հավաստում էր, որ նախկինում Վանի ... շրջանային կառավարիչներ էին նշանակվել այնպիսի մարդիկ, որոնք իրենց վայրագությամբ տեղական ազգաբնակչության մեջ արթնացրել էին զզվանքի զգացում[4]: Սակայն այդ փոփոխությունները տեղի էին ունենում շատ դանդաղ: Կ. Սասունու վկայությամբ՝ «Բնական է մեկ քանի ամսվա ընթացքին կարելի չէր մաքրել Տաճկահայաստանը օտարազգի

---

[1] Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы. Тбилиси, 1958, с. 8.

[2] *Վ. Հ. Մ ե լ ի ք յ ա ն. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (մարտ 1917 թ.).– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), 1987, -3, էջ 131:*

[3] *«Արև» (Բաքու), 2. IV. 1917:*

[4] *«Վան-Տոսպ» (Թիֆլիս), 19. III. 1917:*

կառավարիչներե, որոնք ռուսական տիրապետության հետ մեկտեղ հոն հաստատված էին, և հեղափոխության հռչակման օրերեն սկսած, հեղափոխական բանակի կողմն անցած էին … Սակայն կամաց-կամաց անոնք սկսած էին տեղի տալ և Տաճկահայաստանի կառավարական վարչությունը ամբողջովին կհայանար: Վասպուրականի և Տարոնի նահանգներու մեջ, գրեթե, որևէ օտար պաշտոնյա գոյություն չուներ»[5]: Վանի վիլայեթի Բայազետի օկրուգի հայ բնակչության ներկայացուցիչները 1917 թ. մարտին Անդրկովկասյան հատուկ կոմիտեին ուղղված իրենց դիմում-բողոքում նշում էին, որ «Ռուսաստանի ներքին կյանքում տեղի ունեցած հեղաշրջումը վարչական ու իրավական ոչ մի փոփոխություն չմտցրեց մեր օկրուգում … մեզ մոտ դեռ շարունակվում է գործել հին վարչակարգը, որը ղեկավարվում է հին կառավարության ավերիչ հրահանգներով, անթիվ վնասներ է պատճառում բնակչությանը, ամեն ձևով ահաբեկման է ենթարկում տեղական բնակիչներին և ճնշում է գործադրում այն անմեղ մարդկանց վրա, որոնք կցանկանային իրենց համակրանքն արտահայտել նոր վարչաձևի նկատմամբ»[6]:

Ջանքերի գնով Պետրոգրադի կենտրոնական իշխանության հսկողության տակ հաջողվեց կազմել Հայաստանի համար մասնավոր մի վարչություն, որի կենտրոնն էր Թիֆլիսը: Մինչև 1917 թ. օգոստոս այն իր մասնաճյուղերն ուներ Վանում, Կարինում, Երզնկայում, Բայազետում և Տրապիզոնում[7]:

Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո տեղում համապատասխան աշխատանքներ ծավալելու և կազմակերպչական ձեռնարկումներ իրականացնելու նպատակով Վան են ժամանում ճանաչված գործիչներ Հմայակ Մանուկյանը և Հայկ Խտոյանը: Առաջինը մնում է Վանում, իսկ երկրորդը շուտով վերադառնում է Երևան՝ ամուր պահելու համար Վան–Երևան գործակցությունը[8]:

Վանի քաղաքապետարանի աշխատանքներն ուժեղացնելու և այն Վասպուրականի ժողովրդի կամքն արտահայտող հաստատություն դարձնելու համար 1917 թ. մարտի 23-ին, 24-ին և 26-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերության Վանի պաշտոնատան մեջ (Խաչ-փոդոցի վրա, Նալբանդյանների տուն) տեղի ունեցան հասարակական խորհրդակցական ժողովներ, որոնց խնդիրն էր ճշտել իրենց դիրքն ու անելիքը Փետրվարյան հեղափոխության հանդեպ: Ժողովի մասնակից-

---

[5] *Կ. Մասունի. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914–1918). Տաճկահայոց գաղթաշարժը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բոստոն, 1927, էջ 142:*

[6] Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сборник документов. Ереван, 1957, с. 18.

[7] *Թ ե ո դ ի կ. Ամենուն Տարեցույցը, Ժ–ԺԴ տարի, 1916–1920, Կ. Պոլիս, 1920, էջ 109:*

[8] *Վասպուրական. 1915–1930, Վենետիկ, 1930, էջ 102:*

ներն ուրախությամբ են արձագանքում իշխանափոխությանը և որոշում են լծվել հեղափոխության ամրապնդման գործին: Միաժամանակ, ժողովականները որոշում են զգուշորեն իրենց ձեռքը վերցնել երկրի կառավարման գործընթացը: 1917 թ. մարտի 27-ին ստեղծվեց զուտ հայկական ժամանակավոր ղեկավար մի մարմին, որը սկզբում կոչվեց Քաղաքապետական[9]:

Փետրվարյան հեղափոխության անմիջական ազդեցությամբ և Վասպուրականի ՀՀԴ կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Վանի «Ազատության լույս» գրադարանում ապրիլի 7-ին նախ նշվեց 1915 թ. ապրիլյան կռիվների տարեդարձը, ապա ապրիլի 9-ին քաղաքի Նորաշեն եկեղեցու գերեզմանատան մեջ, Դանիել վարդապետի նախագահությամբ, կատարվեց Ապրիլյան հերոսամարտի նահատակների հոգեհանգիստը: Զինվորական երաժշտության ուղեկցությամբ թափորը շարժվեց դեպի Արարուց գերեզմանատուն, ուր ամփոփված էին ազատագրական պայքարի նահատակների՝ Վազգենի (Տիգրան Տերոյան), Մուքոյի, Արշակի, Հրաձիգ Ռուբենի, Ռափայելի, Հարությունի, Իշխանի (Նիկոլ Պողոսյան), Խեչոյի (Խաչատուր Ամիրյան) և ուրիշների աճյունները[10]:

Ապրիլի 23-ին Վանում գումարվեց ՀՀԴ Վասպուրականի Շրջանային ժողովը, որին մասնակցում էր 180 պատգամավոր: Կազմակերպչական մի շարք հարցերի հետ մեկտեղ քննարկվում է նաև տեղում գործող կազմակերպությունների, հայ–քրդական հարաբերությունների, ինքնապաշտպանության, ոստիկանության, ներգաղթի և տեղավորման հարցերը[11]:

Ռուսաստանի ժամանակավոր կառավարության գլուխ կանգնած իշխան Գ. Լվովը, արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոյի հետ մայիսի 15-ին մշակում է պատերազմի իրավունքով Արևմտյան Հայաստանի գրավված շրջանների գերագույն կոմիսարի լիազորություններին վերաբերող հրահանգներ, որոնցում մասնավորապես նշվում էր, որ «Ժամանակավոր կառավարությունն այժմ պատերազմի իրավունքով գրավված Ասիական Թուրքիայի մարզերից բնիկ հայկական է ճանաչում Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգները»[12]: Բանակի և մարզե-

---

[9] *Հ. Մանուկյան. Դեպքերը Վասպուրականում (1914–1918).– «ՎԷմ» (Փարիզ), 1937, հունվար–մարտ, թիվ 1, էջ 61:*

[10] *«Արև», 3. V. 1917:*

[11] *Հ. Մանուկյան. նշվ. աշխ., էջ 61:*

[12] Архив внешней политики Российской Империи (*այսուհետև՝* АВПРИ) РФ, ф. Политархив, 1915–1917 гг., оп. 482, д. 3481, л. 81; Центральный государственный военно-исторический архив (*այսուհետև՝* ЦГВИА) РФ, ф. 2100, оп. 1, д. 6, л. 6; Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и

րի միջև եղած սահմանագիծն անցնում էր Սյուրմենե, Բայբուրթ, Դերջան, Մամախաթուն, Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի և Սարայ քաղաքներով[13]:

Նախկին նահանգների փոխարեն ստեղծվեցին Վանի, Էրզրումի և Խնուսի մարզերը, որոնք իրենց հերթին բաժանվում էին օկրուգների ու տեղամասերի: Վերջինները կառավարում էին պետերը, իսկ մարզերն ու օկուգները՝ կոմիսարները, որոնք ամենուրեք նշանակվում էին ռուսներից: Քաղաքներում և գյուղերում պետք է ստեղծվեին գործադիր կոմիտեներ, սակայն դրանք շատ դանդաղ էին իրականանում:

Ստեղծված նոր իրադրության պայմաններում Վասպուրականում ինքնաբերաբար առաջ է գալիս տեղական ղեկավար նոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը: Սակայն հաշվի առնելով, որ նոր մարմնի ստեղծումը անպատեհություն կարող էր առաջացնել հայկական ընկերությունների շրջանում, որոնք ճանաչված էին և ունեին դրամական միջոցներ, վերջիններիս ներկայացուցիչների հետ, քաղաքապետ Ավետիս Թերզիբաշյանի և Վանի առաջնորդական տեղապահ Դանիել ծայրագույն վարդապետ Զադոյանի մասնակցությամբ, մայիսի սկզբներին կազմվում է 8 հոգուց բաղկացած ժողովրդական ներկայացուցչական ժամանակավոր ղեկավար մի մարմին՝ Շրջանային վարչություն՝ ժամանակավոր Վարիչ մարմին (Վանի փոքր Քեանդրչի փողոցի կաթոլիկ ասորիների շենքում), որի մեջ մտնում են քաղաքապետը, դաշնակցական ու սահմանադիր-ռամկավար կուսակցությունների ներկայացուցիչներ՝ Կ. Համբարձումյանը (նախագահ), բժ. Տեր-Թովմասյանը, Գր. Օհանջանյանը, Ա. Մաքսապետյանը, Գր. Խլղթյանը, Ս. Հյուս-Փանոսյանը, Ս. Մեսրոպյանը և Բ. Կապուտիկյանը[14]: Երկու–երեք ամիս անց վարչական մարմնի մեջ մտավ Գրիգոր Բուլղարացին (զինվորական գործերի վարիչ)[15]: Վարչական մարմնի գործունեությունն ենթակա էր Վանում գործող կուսակցությունների՝ ՀՀԴ-ի և Ռամկավարների լիազոր երկու ներկայացուցիչների վերահսկողությանը, որոնք մասնակցում էին վարչական մարմնի ժողովներին և խորհուրդներ ու հանձնարարականներ տալիս նրան[16]: «Ժողովրդի տրամադրությունը շատ լավ է ստեղծված նոր կազմակերպության նկատմամբ,– գրում է «Հորիզոն» թերթը,– տեղական բոլոր ուժերը գործի լծված՝ կաշ-

---

комментарий, т. 1, сост., ответ. ред., автор предисл. и комм. Ю. Г. Барсегов. М., 2002, с. 298–300.

[13] *Վ. Հ. Մ ե լ ի ք յ ա ն. 1917 փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 149–150:*

[14] *«Արև», 11. IV. 1917, նաև՝ Վասպուրական. 1915–1930, էջ 101, «Աշխատանք» (Վան), 13. V. 1917:*

[15] *Ե. Վարդանյան. Նահանգ Բյուրոց Վասպուրականի, ա. տ. և թ. էջ 5:*

[16] *Ս. Ս ա ր հ ա դ յ ա ն. Կյանքիս հուշերից, Երևան, 2007, էջ 157:*

խատեն մեծ եռանդով: Յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է արդեն ուժ տալ ժողովրդեն բխած իշխանության»[17]:

Այդ նոր ղեկավար մարմնի նախագահ՝ Վանի նահանգային կոմիսար է ընտրվում «Համառուսաստանյան քաղաքների միության» կովկասյան բաժանմունքի լիազոր Կոստյա Համբարձումյանը՝ «Մեր Կոստին»[18], որը, Մ. Օրմանյանի դիպուկ բնորոշմամբ, «Վասպուրականի երկրորդ Խրիմյանն էր ... »[19], կամ, ինչպես նրան կոչում էին, մի նոր Արմենակ Եկարյան, մարդ, որը «հոգով ու սրտով նվիրված է Վասպուրականի վերաշինության գործին … մի անձնավորություն է, որ Վանի շրջանային վարչության ոգին կկազմե, նրա գլխավոր զարկերակն է»[20]: Ըստ էության, Կ. Համբարձումյանը Վանի նահանգապետի տեղակալն էր: Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության նախագահ Ա. Կերենսկու ժամանակ նահանգապետերը ռուսներ էին, որոնք նստում էին Թիֆլիսում և որոնց պաշտոնեությունը ձևական բնույթ ուներ, իսկ նրանց օգնականները հայեր էին, որոնք մշտապես լինում էին տեղերում: Փաստորեն, տեղական կառավարումը գտնվում էր հայերի ձեռքին, իսկ Շրջանային վարչությունն էլ կրում էր գրեթե զուտ հայկական կերպարանք[21]: Նրա լիազորությունները տարածվում էին Վանի շրջանի (Թիմարի, Վան-Տոսպի, Հայոց Ձորի, Խոշաբի, Բաշկալեի, Սարայի և Արճակի) տարածքում[22]:

Անցնելով իր պաշտոնին՝ Վասպուրականի կոմիսար Կ. Համբարձումյանը տեղի հասարակությանն ուղղած հուլիսի 15-ի իր կոչում նշում էր.

«Քաղաքացինե՛ր, պատիվ ունեմ հայտնել ձեզ, որ գրավված Հայաստանի առանձին կոմիսարության կողմից նշանակված եմ Վանի, Խոշաբի, Սարայի և Բաշկալեի շրջանների ժամանակավոր կոմիսար:

Երկար տատանումե ետք, երբ ի վերջո համաձայնեցա ընդունել ինձի առաջարկված պատասխանատու պաշտոնը, ես նկատի ունեցա ոչ միայն գեղեցիկ Վասպուրականին ծառայելու պարտականությունը, այլ նաև այն պարագան, որ Վասպուրականի հասարակությունը ինձի զորավիգ պիտի ըլլա իմ պարտականությունը կատարելու մեջ, ինձի հետ

---

[17] *«Հորիզոն» (Թիֆլիս), 27. VIII. 1917:*

[18] *«Հայաստան» (Թիֆլիս), 1917, - 92:*

[19] *Մ. ա ր ք. Օ ր մ ա ն յ ա ն. Թուրքահայ ադետը. պատմական փաստաթղթեր, Ա, Տեղեկագիր, Էջմիածին, 1919, էջ 37:*

[20] *«Արև», 15. VII. 1917:*

[21] *Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի հանրապետություն, Երևան, 1993, էջ 24:*

[22] *Ա. Հ ա ց ա գ ո ր ծ յ ա ն. Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (ականատեսի հուշեր).– ԲՀԱ, 1969, № 1, էջ 214–215, նաև՝ Հորիզոն, 3. VIII. 1917, «Ասպարեզ» (Ֆրեզնո), 21. II. 1919:*

պիտի ըլլան հասարակական ու քաղաքական բոլոր ուժերն ու հոսանքները, և մենք բոլորս միասին պիտի աշխատենք քանդված Վասպուրականի վերաշինությանն ու քայքայված ժողովուրդի տնտեսական ու բարոյական ուժերու վերականգման ուղղությամբ…»[23]*:*

Կոչից աներկբա երևում է այն մտահոգությունն ու լավատեսությունը, որ Կ. Համբարձումյանը տածում էր Վասպուրականի վերաշինության և քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ:

Աստիճանաբար նոր կազմված ղեկավար մարմինն նախանշում է իր գործունեության ուղին և ստեղծում է հանձնաժողովներ, այն է՝ 1) պարենավորման (որն իր մեջ ներառում էր՝ ուտեստ, սերմացու, լծկան, գյուղատնտեսական գործիքներ, ոռոգում, կաթնատու անասուն, հագուստեղեն, տասանորդի հարկ, նպաստ, պահեստներ և այլն), 2) տեղավորման (ազատ շրջանների բնակեցում, բնակարանների տրամադրում, տեղավորման համակարգի ստեղծում և ապահովություն), 3) ոստիկանության (ոստիկանների հավաքագրումը, զենքի քանակը, բյուջեն և դրա բաշխումն ըստ շրջանների), 4) կրթական (աշակերտների ու որբերի թիվը, բացվելիք դպրոցները, բյուջեն, ուսումնական խորհուրդը) և 5) հաղորդակցության ու զանազան այլ հարցերի (ցամաքի և լճի միջև հաղորդակցության կազմակերպում, Շրջանային վարչության և կոմիսարների հարաբերությունների ու իրավասությունների սահմանների ճշգրտումը, Շրջանային վարչության նոր ընտրության կազմակերպում): Յուրաքանչյուր հանձնաժողով անկախ էր իր գործունեության մեջ, միայն թե այդ գործունեությունը նախապես անցնում էր ղեկավար մարմնի բովով, որպեսզի հանձնաժողովների իրար հատվելու առթիվ չստեղծվեր և եղած սուղ միջոցներն ավելի արդյունավետ օգտագործվեին երկրի տնտեսությունը զարգացնելու ու մարդկանց կյանքի ապահովության վստահություն ներշնչելու համար:

Այսպիսով, Շրջանային վարչությունն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում երկրի քաղաքացիական կառավարումը[24]*: Գործի հաջողությանը մեծապես նպաստում է նաև այն, որ օգոստոսի 8-ին ռուսական զորքերի կողմից գրավված տարածքների գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովի քաղաքացիական մասի երկրորդ տեղակալ է նշանակվում բժիշկ Հակոբ Զավրիևը (Զավրիյանը), որն իր ողջ կյանքը նվիրել էր հայ դատին և մտերիմ էր Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության ղեկավար Ա. Կերենսկու հետ*[25]*:*

---

[23] *«Հորիզոն», 27. VIII. 1917:*

[24] *«Արև», 24. V. 1917:*

[25] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 1, с. 301; *նաև՝ Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 23, Վ. Հ. Մ ե լ ի ք յ ա ն. 1917 Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 151:*

Սեպտեմբերի 9-ին հրապարակվում է գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովի հրամանը, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանը դիտարկվում էր մեկ ամբողջություն՝ ռուսական տիրապետության տակ գտնվող ինքնավար նահանգ, որի մարզերից ձևավորվելու էր 3 շրջան՝ 1) Էրզրումի, 2) Խնուսի և 3) Վանի (Բերկրի, Արճեշ, Սարայ, Բաշկալե, Խոշաբ, Վան): Մ. Արզումանյանի բնորոշմամբ՝ ակներև էր, որ «ռուսական ... բուրժուազիան ձգտում էր ամեն կերպ խուզել Արևմտյան Հայաստանի սահմանները»[26]: Այդ մարզերի նահանգապետերը նշանակվում էին Պ. Ավերյանովի և Հ. Զավրիևի կողմից: Ըստ այդմ՝ Վանի շրջանի կոմիսար է նշանակվում Կ. Համբարձումյանը[27]:

1917 թ. աշնանը Թիֆլիսում գումարվում է Դաշնակցության Շրջանային ժողովը՝ Արևելյան ու Արևմտյան բյուրոների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկա էր նաև Կ. Համբարձումյանը, որին ժողովն ընտրում է Ռուսաստանի Սահմանադիր ժողովի թեկնածու: Նա, սակայն, գերադասում է վերադառնալ Վան՝ հայտարարելով, որ «ես պատրաստ եմ լսելու Վասպուրականի ձայնը, ես կերթամ Վան ... »: Կ. Համբարձումյանը Վան է բերում Շրջանային ժողովի քաջալերանք-ողջույնը՝ «գրավված վայրերու մեջ գործող բոլոր աշխատավորներուն»[28]:

Շրջանային վարչությունն իրականացնում է մի շարք ձեռնարկումներ, որոնք Վանում իրոք դառնում են ապահով և ինքնուրույն կյանքի երաշխիք: Այսպես, շտապ մշակվում է Արևմտյան Հայաստանը և, մասնավորապես, Վանը գաղթական հայերով բնակեցնելու ծրագիր[29], այդ նպատակով ստեղծվում է մեծ մասամբ հայերից բաղկացած հատուկ վարչություն[30], որի համար հատկացվում են մեծագումար վարկեր[31]:

Այդ ծրագրի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի գրավված տարածքների գեներալ-կոմիսարի կարգադրության համաձայն, «հանուն արդարության և հայերի իրավունքների վերականգնման»[32], որոշվում է կազմակերպել գաղթականների վերադարձը Վանի շրջան[33]: Վերադարձող փախստականները պետք է անձամբ կամ խմբովին հեռագրով

---

[26] *Մ. Վ. Արզումանյան. Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ և նրա մերկացումը բոլշևիկյան կուսակցության կողմից.– ԲՀԱ, 1967, № 2, էջ 114:*

[27] ЦГВИА РФ, ф. 13249, оп. 1, д. 25, л. 114; *նաև՝ Կ. Սասունի. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914–1918), էջ 141:*

[28] *Վասպուրական. 1915–1930, էջ 102:*

[29] *Այդ մասին հանգամանորեն տե՛ս մեր «Ժամանակավոր կառավարությունը և հայ գաղթականությունը» հոդվածը [«Պայքար» (Երևան), 1997, № 1, էջ 20–22]:*

[30] *Հ. ավ. քհ. Հաճյան. Հայոց տաժանքի ճամբաներով, հ. Ա, Թեհրան, 1965, էջ 418:*

[31] *Յ. Իրազեկ. Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ 1917–1922, Բեյրութ, 1956, էջ 5:*

[32] АВПРИ РФ, ф. Политархив, 1915–1917 гг., оп. 482, д. 3481, л. 81.

[33] *«Աշխատանք», 22. VII. 1917:*

դիմեին Թիֆլիս՝ գեներալ-կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ, բժիշկ Հ. Զավրիևին և ստանային առանձին թույլտվություն[34]: Ազատ երթևեկելու համար բավական էին հայկական նպաստամատույց ընկերությունների և Երևանի Առաջնորդարանի տված ռուսերեն վկայագրերը: «Հեղափոխության մեկ փոքրիկ արդյունքն էր այս փաստը, թերևս պիտի ըսել նաև ապացույց մեր ինքնուրույնության»[35],– փաստում է ժամանակակիցներից մեկը:

1917 թ. վաղ գարնանը տեղի հայկական ընկերությունները, որոնք Վան–Վասպուրականի 1916 թ. նոյեմբերյան նահանջից հետո մեկնել էին Կովկաս և Պարսկաստան, անմիջապես վերադառնում են Վան՝ իրենց հետ բերելով մեծ թվով գաղթական վասպուրականցիներ, որոնք լծվում են վերաշինական աշխատանքի: Ներգաղթողները Վան–Վասպուրական էին վերադառնում կա՛մ Ջուլֆա–Խոյ–Արճակ–Ճանիկ, կա՛մ էլ՝ Էջմիածին–Իգդիր–Բերկրի–Թիմար ճանապարհներով[36]:

Դանիել վարդապետին ուղղված Սալմաստի գաղթականական կոմիտեի 1917 թ. մայիսի 6-ի հեռագրում նշվում էր՝ «Վանի շրջանի պատկանող 2000 գաղթականներ չափազանց նեղ դրության մատնված են: Սնունդ չկա, աշխատանք չկա, անասունները պահելու ոչ մի հնարավորություն չունեն: Կցանկանանք գաղթականները տեղափոխել Վան …»[37]: Իգդիր–Վան ճանապարհը բաց էր և ապահոված ռուսական զինվորական կայաններով՝ կորդոններով: Վան մեկնեցին արհեստավորներ, խանութպաններ, այգեգործներ, ուսուցիչներ, բժիշկներ, հիվանդապահներ և այլ մասնագիտությունների տեր մարդիկ:

Գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովը Վանի շրջանի դաշտերում աշխատելու, բնակչությանը տրվող շուտափույթ օգնությունը վերականգնելու և պետական գանձարանի հաշվին ժողովրդին պահելու անհրաժեշտությունից ազատելու համար առաջարկում էր խոչընդոտ չհանդիսանալ գաղթականների վերադարձի ժամանակ[38]: Մեկնողները, սակայն, ճանապարհներին մեծ դժվարությունների էին հանդիպում: Բացի բնական անհարմարություններից (ձյուն, բուք, ցեխ և այլն)՝ վերադարձողները համապատասխան օժանդակություն չէին ստանում սննդատու կայանների կողմից: Նրանց չէր հատկացվում կերակուր, տաք ջուր և օթևան[39]:

Չնայած ժամանակավոր կառավարությունը Պ. Ավերյանովին ուղղված իր ղեկավար ցուցումներում մատնանշում էր, որ անհրաժեշտ

---

[34] *«Աշխատանք», 19. VII. 1917:*
[35] *Վասպուրական. 1915–1930, էջ 101:*
[36] *Ս. Սարհադյան. նշվ. աշխ., էջ 148:*
[37] *«Հայաստան», 18. V. 1917:*
[38] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 47:*
[39] *«Արև», 11. IV. 1917:*

է միջոցներ ձեռնարկել Վանի, Բիթլիսի և Էրզրումի երբեմնի նահանգները հայերով վերաբնակեցնելու համար[40], սակայն միաժամանակ օգտագործում էր բոլոր հնարավորությունները գաղթականների հոսքը դեպի Վան դադարեցնելու համար: Այսպես, ներքին գործերի նախարարությանը կից գործող Հատուկ խորհրդակցության նախագահ Էնգելգարդտը ապրիլի 30-ի իր շրջաբերականում գրում էր, որ «… հաշվի առնելով գաղթականների ցանկության իսկությունը՝ կախված Ռուսաստանում սկսված իրադարձությունների հետ, վերադառնալ իրենց նախկին վայրերը, գաղթականների տեղավորման բաժինը, միաժամանակ իր պարտքն է համարում հայտարարել, որ … զինվորական իշխանությունները մատնանշելով պարենի ծայրահեղ պակասությունը և բնակարանների բացակայությունը, պահանջում է վճռական միջոցներ ձեռք առնել գաղթականների հետադարձ շարժումը 1917 թ. ապրիլին դադարեցնելու համար: Գաղթականների անկանոն հոսքի անխուսափելի արդյունքը կարող է հանդիսանալ նրանց հիվանդությունների և նրանց համար կյանքի արտակարգ ծանր պայմանների ստեղծումը, որից հետո կազմակերպված օգնությունը անհնարին կդառնա»[41]:

Սեպտեմբերին գեներալ-կոմիսարի օգնականը, Կովկասյան բանակի հրամանատարի հեռագրի համաձայն, խնդրում էր կասեցնել վերաբնակիչների հոսքը՝ հաշվի առնելով սննդամթերքի պակասությունը: Նման պահանջով նոյեմբերի 13-ին գեներալ-կոմիսարին էր դիմել նաև գեներալ Պ. Օգոնովսկին[42]:

Կովկասյան ճակատի շտաբի պետ գեներալ-մայոր Վիշինսկին գեներալ-կոմիսարին ուղղած նոյեմբերի 14-ի թիվ 6406 գրության մեջ նշում էր, որ մեծացել էր հայ գաղթականների հոսքը Երևանի նահանգից Վանի շրջան: Հաշվի առնելով սննդամթերքի և հագուստեղենի պակասությունը IV կորպուսի շրջանում՝ նա առաջարկում էր դադարեցնել գաղթականների հոսքը[43]:

Այնուամենայնիվ, Վան-Վասպուրականի բնակչության թիվը գնալով ավելանում էր: Արդեն 1917 թ. ամռանը հայկական մարզերը, ըստ Ս. Վրացյանի արտահայտության, «դարձել էին իսկական մտքով Հայաստան»[44], քանի որ ներգաղթողների թիվը Վանից մինչև Տրապիզոն ու Երզնկա անցնում էր 140000-ից[45]: Կարճ ժամանակի ընթացքում անմարդաբնակ ու ամայի հողերը լցվեցին ու վերակենդանացան հայ ազ-

---

[40] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 130–131:*

[41] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 47, л. 208; *նաև՝ ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 53:*

[42] *ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 92, 116:*

[43] *ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 38, 41, նաև՝ ֆ. 50, ց. 1, գ. 207, թ. 115:*

[44] *Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 24:*

[45] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. Հայ ազատագրական շարժման օրերեն, Հուշեր 1890 են 1940, Երևան, 2003, էջ 207:*

գաբնակչությամբ, որովհետև, ինչպես դեպքերի ժամանակակիցն է նշում, Վան-Վասպուրականը «գերազնահատում ենք օտար երկրների խորթություններով լի հանգստավետ կյանքից»[46]:

Եթե, ըստ Ա-Դոյի, 1917 թ. հունիսին Վան-Վասպուրականում հաշվվում էր 17000 բնակիչ (Վանում՝ 4000, Թիմարում՝ 7000, Վան-Տոսպում՝ 2500, Արճակում, Սարայում՝ 1500, Հայոց–Զորում՝ 1200, Բերկրի-Աբաղայում՝ 800 և այլն)[47], ըստ Ս. Վրացյանի՝ 25425[48], ապա հուլիսի 17-ի տվյալներով Վանի մարզում կար արդեն 52000 մարդ[49]: Այն կազմում էր ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում բնակություն հաստատած 142425[50] հայ ազգաբնակչության մոտավորապես 1/4 մասը: Իսկ դա էլ նշանակում էր, որ Վան-Վասպուրականը հանդիսանում էր արևմտահայության ամենաապահով շրջաններից մեկը:

Հոկտեմբերին, սակայն, Վանի ազգաբնակչության թվաքանակը փոքր-ինչ նվազեց: Վանի շրջանի կոմիսար Տեր-Թումասյանցի վկայությամբ՝ Վանի մարզում կար 25182 բնակիչ, որից 23822-ը հայեր էին, 1221-ը՝ ասորիներ, 95-ը՝ թուրքեր, 38-ը՝ եզդիներ[51]: Դեկտեմբերին բնակչության թիվը կրկին աճեց. Կ. Համբարձումյանի վկայությամբ՝ շրջանում արդեն կար 28558 գաղթական, որից հայ՝ 25340, ասորի՝ 1868, թուրք՝ 95, եզդի՝ 50[52]: Այն 1917 թ. աշնանային ներգաղթի արդյունք էր, որն էլ իր հերթին պայմանավորված էր պետական գանձարանի սնանկությամբ:

Շրջանային վարչության հաջորդ ձեռնարկումն այն էր, որ Իգդիր–Վան (Գյոլլու, Փանզ, Ջանիկ, Ալյուր, Բերկրի, Ոստան, Սոուկ-սու, Սավալի) և Վան–Խոյ, (Արճակ, Սարայ, Կոտուր և Խոյ) ճանապարհների վրա բացվեցին սննդակայաններ, հիվանդանոցներ, դեղատուն, ախտակայան և որբանոց, որոնք տնօրինում էր Քաղաքների միությունը: Սննդակայաններում կային զինված ուժեր, որոնք ապահովում էին ժողովրդի ազատ երթևեկությունը, սնունդը, բժշկական օգնությունը, պաշտպանությունը, իսկ պաշտոնյաներին ապահովում էին նաև փոխադրական միջոցներով: Կ. Համբարձումյանը ղեկավար մարմնի

---

[46] *Ս. Սարհադյան. նշվ. աշխ., էջ 149:*

[47] *Պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, Ա-Դո. Իմ հիշողությունները, բ. մ. 839/գ. 196, էջ 270, նաև՝ «Հորիզոն», 1. VII. 1917:*

[48] *«Հորիզոն», 1. I. 1918, նաև՝ Ս. Վրացյան. Հայաստանի հանրապետություն, էջ 5:*

[49] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 59, л. 188–189.

[50] *Ս. Վրացյան. նշվ. աշխ., էջ 5:*

[51] *ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 44:*

[52] ЦГВИА РФ, ф. 13277, оп. 3, д. 41, л. 79, *նաև՝ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 31, թ. 9:*

հսկողությանը ենթարկեց այն բոլոր հաստատությունները, որոնք իրենց հրահանգները ստանում էին Վանից[53]:

1917 թ. օգոստոսի 31-ին գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովը ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ մարզերի ռազմառստիկանական պահպանությունը վերակազմակերպելու և Արևմտյան Հայաստանում մարզային ու քաղաքային միլիցիա (ոստիկանություն) ստեղծելու մասին զեկուցագիր ու կանոնադրության նախագիծ: Զեկուցագրում նշվում էր, որ պետության շահերը պահանջում էին ամեն կերպ ամրապնդել Կովկասյան բանակի թիկունքը, որի համար էլ անհրաժեշտ էր ստեղծել կիսառազմականացված ոստիկանություն[54]: Ժողովրդական ոստիկանության ջոկատների գլխավոր խնդիրն էր լինելու ապահովել տեղի բնակչության անվտանգությունը ավազակախմբերից, որոնք հանդգնում էին նաև հարձակվել ռուսական զորքերի պահեստների, տրանսպորտի և փոքրաթիվ ստորաբաժանումների վրա[55]: Նախատեսվում էր բազմաքանակ ու լավ վարձատրվող ոստիկանություն ստեղծել Վանի, Խնուսի, Էրզրումի ու Պոնտոսի մարզերում: Վանի մարզն ընդգրկում էր Վանի նախկին նահանգը՝ իր հին թուրքական սահմաններով, Բայազետի և Դիադինի օկրուգները՝ մինչև Թիշլի-չայ գետից արևմուտք: Այդ սահմաններում մարզը ներառում էր 52.000 բնակիչ: Թուրքական և պարսկական Քրդստանի հետ մարզի հարևանությունը, ավազակային ասպատակությունների տեսակետից, առանձնահատուկ վտանգավոր դրություն էր ստեղծում[56]: Ոստիկանությունը պետք է լիներ հետևակային և հեծյալ՝ զինված ժամանակակից զենքով: Նախատեսվում էր ստեղծել զորամասերի կանոններով գործող ոստիկանության չորս տեսակ՝ տեղական անվտանգության, հաղորդակցության ուղիների, ուղեկալային և պահեստային[57]:

Մարզային և քաղաքային ոստիկանության ժամանակավոր կանոնադրության նախագծի համաձայն՝ հասարակական կարգի ու անվտանգության պահպանման, ինչպես նաև իշխանությունների օրինական կարգադրությունները ի կատար ածելու համար յուրաքանչյուր

---

[53] Центральный государственный исторический архив Республики Грузии, ф. 520, оп. 1, д. 90, л. 169–170.

[54] *Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Ցարական և Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915–1917 թթ.– ԲՀԱ, 1971, № 3, էջ 64–71:*

[55] *Մ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Երևան, 2005, էջ 111:*

[56] *Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 67:*

[57] ЦГВИА РФ, ф. 366, оп. 1, д. 93, л. 155; ф. 2003, оп. 4, д. 19, л. 179–186; *նաև՝ Մ. Վ. Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 118:*

մարզում հիմնվում էր մարզային, իսկ մի քանի քաղաքներում՝ քաղաքային ոստիկանություն[58]:

Մինչ այդ՝ մայիսին, ժողովրդական նոր կառավարության հետ միասին Վանում հիմնադրվել էր ոստիկանական մարմին՝ Վանի մարզային միլիցիա[59], որը ղեկավարում էին Լևոն Շաղոյանը և Բուլղարացի Գրիգորը[60]:

Նկատենք, որ Վանում անհնարին էր շոշափելի գործ կատարել, ստեղծագործական աշխատանք իրականացնել, վարչական կազմակերպություն ստեղծել, բնակչության ֆիզիկական և տնտեսական գոյությունը պահպանել՝ առանց ոստիկանական ուժեղ կազմակերպության: Վասպուրականը, որը գտնվում էր ռազմաճակատի հետ շփման գոտում, շարունակական և սպառնացող վտանգի տակ, ոստիկանության անհրաժեշտության տեսանկյունից ուներ բացառիկ նշանակություն:

Հոկտեմբերյան հեղափոխության սկզբից ետթ Արևմտյան Հայաստանի ոստիկանական նախկին բոլոր պահնորդները հեռացվեցին գրավված մարզերից, որի արդյունքում նախկին 3000 ռազմա-ոստիկանական պահակախմբի փոխարեն մնաց 1000-ից պակաս ոստիկան[61]:

Վանի հայկական ոստիկանության վարչությունը Վանը (Այգեստան և Քաղաքամեջ) 4 շրջանների բաժանելուց հետո իր ուշադրությունը սևեռում է գավառների վրա: Վարչությունը ձեռնարկում է ձիավոր և հետևակ ոստիկանական խմբեր կազմել Հայոց-Ձորի, Թիմարի, Արճակի, Սարայի և Բերկրիի շրջանների համար: Ոստիկանների թիվը հասնում էր 154 հոգու, որոնցից 70-ը՝ ձիավորներ էին: Նրանք ստանում էին 60–120 ռ. աշխատավարձ[62]: Ըստ էության, Վասպուրականը կարիք էր զգում 800 սպառազեն և 700 պահեստային ոստիկանների[63]: Սակայն զենքի և դրամի սակավության պատճառով վարչությունն ի վիճակի չէր ավելացնել ոստիկանների թիվը: Կառավարությունը տվել էր շատ քիչ քանակությամբ զենք և էլ ավելի քիչ քանակությամբ փամփուշտ: Ոստիկանների կեսից ավելին կամ կրում էին միայն ատրճանակներ, կամ էլ զենք չունեին: Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության հրահանգների համաձայն՝ ոստիկաններն աշխատավարձ պիտի ստանային նախկին ստրաժնիկների և գարադավոյների չափ, այսինքն՝ հետևակը՝ 35 ռ., հեծելազորը՝ 70 ռ.: Առաջին երկու ամիսների համար ոստիկանների ստացած աշխատավարձը, սակայն, հետևյալ պատկերն

---

[58] *Ս. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 72–82:*
[59] *Նույն տեղում, էջ 72:*
[60] *Ս. Վրացյան. նշվ. աշխ., էջ 62:*
[61] *Ս. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 65:*
[62] *«Հորիզոն», 29. VIII. 1917:*
[63] *Նույն տեղում:*

ուներ. հետևակ՝ 60-ական ռ., ձիավորներ՝ 75-ական ռ., խմբապետներ՝ 100-ական ռ., խմբապետների օգնականներ՝ 80-ական ռ.: Երրորդ ամսվա համար Շրջանային վարչությունը կատարեց աշխատավարձերի բարձրացում. հետևակ՝ 80 ռ., ձիավորներ՝ 100 ռ., խմբապետներ՝ 120 ռ.: Երեք ամսվա ընթացքում Շրջանային վարչությունը ոստիկանական վարչության վրա ծախսել էր 33600 ռ., որից 10000-ը՝ տեղական միջոցներից[64]: Թեև ոստիկանությանը հրահանգված էր որևէ խնդրի չխառնվել, սակայն նա երբեմն իրականացնում էր կամայականություններ և անհարկի բռնագրավումներ[65]: Այդուհանդերձ, կարճ ժամանակում Վանի ոստիկանությունը իր օգտակարությունը ցույց տվեց: Այն սանձեց անօրինական գինի և օղի վաճառողներին, արգելեց պղինձ, երկաթ, կաշի և այլ նյութեր արտահանել Պարսկաստան, իսկ որոշներին էլ՝ բանտարկեց[66]:

Քիչ չէին նաև թուրք զինվորների գերեվարության դեպքերը: Վերջիններիս պատմածով թուրքերի հիմնական ուժերի թվաքանակը Վանի մերձակայքում տատանվում էր 600–700-ի սահմաններում: «Ասնց դրությունը հուսահատական է, թեթև հարձակումով ասնք բոլորն ալ կամ անձնատուր պիտի լինին, կամ իրենց շունչը Բիթլիս պիտի առնեն»[67]:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո թե՛ արևելահայերը և թե՛ արևմտահայերն աշխատում էին ունենալ միասնական հայկական զորամասեր, այսինքն՝ ցաքուցրիվ եղած վաշտերն ու գումարտակները վերածել գնդերի և ապահովել իրենց անվտանգությունը: Այդ ուղղությամբ հայերի ցանկությունը տալիս է իր դրական արդյունքը. Ժամանակավոր կառավարության հունիսի 2-ի հրամանագրով հայկական ցաքուցրիվ վաշտերն ու գումարտակները վերածվում են գնդերի: Երեք հրահանգիչների օգնությամբ միջոցներ ձեռնարկվեցին նաև Վանի երիտասարդներին զինվորական պատրաստվածություն տալու և զենք կրելու համար՝ հարձակման ու նահանջի դեպքում բանակին օժանդակելու և քաղաքապահ զորքի դեր կատարելու ուղղությամբ[68]: Այդ նպատակով անցկացվեց ցուցակագրություն և առանձնացվեց 3 հրահանգիչ[69]:

Տնտեսական անմխիթար վիճակը և ճանապարհների անապահովությունն իր կնիքն է թողնում նաև Վանի շուկայի վրա, որը գրեթե ա-

---

[64] *Նույն տեղում:*
[65] *«Արև», 7. IV. 1917:*
[66] *«Արև», 24. V. 1917:*
[67] *«Արև», 15. VII. 1917:*
[68] *«Արև», 7. X. 1917:*
[69] *Նույն տեղում:*

մայացել էր[70]: Վանի օկրուգի պետ գեներալ-մայոր Բուրկովսկին, նկարագրելով Վանի շրջանի վիճակը, նշում էր, որ օկրուգի 6 տեղամասերն էլ ավերված ու կողոպտված են: Կենդանի մնացած բնակչությունն էլ շատ աղքատ էր և գտնվում էր աղետալի վիճակում: Եթե Վանի օկրուգի 2-րդ՝ Արճակի տեղամասում, մինչև պատերազմը եղել էր 26 գյուղ՝ 25000 բնակչությամբ, ապա 1917 թ. մայիսին կար ընդամենը 313 մարդ՝ ցրված 9 ավերված գյուղերում[71]:

Առաջին անհրաժեշտության մթերքները չէին ճարվում, եղածներն էլ առասպելական գներով էին վաճառվում: Այսպես, ցորենի 4 փութը 60 ռ. էր, հաճարը՝ 50 ռ., գարին՝ 45–50 ռ., յուղը՝ փութը 3 ռ., բրինձը՝ փութը 60–80 կոպ., տավարի միսը՝ 60 կոպ., ոչխարի միսը՝ 1 ռ., կաթի փութը՝ 25 կոպ., քարյուղը՝ 75–80 կոպ., հավկիթը՝ հատը 15 կոպ., պանրի փութը՝ 1 ռ. 50 կոպ. – 2 ռ., շաքարի փութը՝ 2 ռ.[72], հարդը՝ 65–70 կոպ., խոտը՝ 1–2 ռ.[73]:

Վանում առկա էին հացի հետ կապված խնդիրներ: Վանի օկրուգի կոմիսար Հովհաննիսյանը նոյեմբերի 10-ին հեռագրում էր, որ «… հացի ու ալյուրի կարիքն ընդունում է սպառնալից բնույթ: Կոմիսարիատը պաշարված է քաղցածների … ամբոխով: Քաղցածները գյուղերից գալիս են քաղաք: Պարզվում է, որ 10000 մարդ բոլորովին զուրկ են հացից»[74]: Քաղաքում աշխատում էր միայն Կովկասի հայոց բարեգործական ընկերության փուռը, իսկ մյուս փռերն ալյուր չլինելու պատճառով փակ էին: Ժողովուրդը հաց, շաքար ու նավթ ստանալու համար օգտվում էր Կովկասի հայոց բարեգործականի ընկերության գրքույկներից[75]:

Հայկական ընկերությունները և հատկապես Հայ գյուղատնտեսական ընկերությունը գյուղացիներին շարունակում էին ապահովել սերմացուով, լծկաններով ու գործիքներով, իհարկե, միայն նոր վերադարձողներին՝ շահագրգռելով գաղթականներին վերադառնալու իրենց հարազատ ծննդավայր:

Միացյալ ընկերությունների հրահանգիչներից տեղում գործում էին 2-ը՝ Արմենակ Մաքսապետյանը (Թիմարի և Բերկրի - Աբաղայի շրջաններում) և Տիգրան Մելքոնյանը (Վանի շրջանում և Հայոց-Ձորում)[76]:

---

[70] «*Արև», 15. VII. 1917:*

[71] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 50, л. 100.

[72] *«Արև», 20. IV. 1917:*

[73] *«Արև», 29. VIII. 1917:*

[74] ЦГВИА РФ, ф. 13232, оп. 1, д. 26, л. 9.

[75] *«Արև», 11. IV. 1917:*

[76] *«Աշխատանք», 13. V. 1917:*

Այդ շրջանում Շրջանային վարչությունը Պարսկաստանից ձեռք բերեց 7000 փութ սերմացու, որից 3000 փութը՝ գարի, իսկ մնացածը՝ ցորեն: Այդ սերմացուն բաշխելու համար ընկերությունների ներկայացուցիչներից կազմվեց մի մարմին՝ Դանիել վարդապետի մասնակցությամբ: Սակայն սպասված գարնանացանքը չեղավ, որովհետև կառավարության պաշտոնյաների և Գյուղատնտեսական ընկերության գնած սերմացուն տեղ չհասավ: Գյուղացիները քանիցս մեկնում էին Արճակ՝ իրենց բաժին սերմացուն ստանալու հույսով, բայց ձեռնունայն հետ էին վերադառնում: «Մեր գյուղացիությունը Կովկասեն վառ հույսերով երկիրը կմտնե, բայց չանցած քանի մ'օր, վառ երազները կցնդին կհուսահատվի և տրամադրություն ցույց կուտա դարձյալ Կովկաս վերադառնալու, քանի որ Գյուղատնտեսն ու Բարեգործականը ի վիճակի չեն առայժմ ժողովրդյան ծով կարիքներուն բավարարություն տալու»[77]:

Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը սահմանափակ շրջանակներում, մասնավորապես խիստ կարիքավորների շրջանում, ժողովրդին սերմացու էր փոխ տալիս՝ մեկ չափ կալոցին երկու չափ ստանալու պայմանով[78]: Բարեգործականը խոստացել էր 16000 փութ սերմացու ցորեն տրամադրել Շրջանային վարչությանը՝ փութը 6 ռ. 20 կոպ. արժողությամբ՝ ժողովրդին սերմացու տալու համար: Բայց 16000 փութից միայն 5000 փութը տրամադրվեց այդ արժողությամբ, իսկ դրանից ավելին վաճառվեց 8 ռ. գումարով[79]:

Անբարյացակամ էր ռուս զինվորականության վերաբերմունքը, որոնք առանց համաձայնեցնելու Վանի Շրջանային վարչության հետ կես կամ քառորդ գնով վերցնում էին գյուղացիությանը պատկանող խոտը և հարդը[80]: Բացի այդ՝ միրգ ուտելու համար զինվորները հաճախակի վնասում էին պտղատու ծառերը, կոտրում ճյուղերը: Վանեցիներն էլ հաճախ խակ-խակ էին հավաքում ծառերի բերքը[81]:

Ինչևէ. Շրջանային վարչության ձեռնարկած որոշակի միջոցառումների արդյունքում երկրի գյուղատնտեսությունը սկսեց արագորեն վերակենդանանալ: Վասպուրականը ծածկվեց կանաչ արտերով: 1917 թ. վերջերին Թիֆլիսի «Ազատամարտ»-ում ականատեսներից մեկը գրում էր. «Տասնյակ վերստերով ճամբա կտրեցինք, Թիմարի ամբողջ երկարությամբ և չգտանք ո՛չ մեկ թիզ հող առանց վարելու. միայն մեկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ սակայն, քիչ ետք նկատեցինք, որ հեռվեն հայ ծեր գյուղացին խտիք ձգած էր հողին մեջ և սկսած էր վարել

[77] *«Արև», 20. IV. 1917:*
[78] *«Արև», 2. IV. 1917:*
[79] *«Արև», 29. VIII. 1917:*
[80] *«Արև», 2. IV. 1917:*
[81] *«Արև», 15. VII. 1917:*

միակ անհերկ հողը»[82]: Միաժամանակ Շրջանային վարչությանը փոփոխության ենթարկեց ընկերություններին տված սերմացուի, լծկանների, գործիքների և այլ օժանդակությունների քանակն ու պայմանաժամը, որով մի կողմից ապահովվեց նյութական խնայողությունը, մյուս կողմից՝ դյուրացվեց գյուղացիների ապրուստը: Կուտակվեցին հացահատիկի պաշարներ և այլ մթերքներ: «Հայը մեկ ձեռքը գենք, մյուսով մաճ ու բահ՝ իր քրտինքով հայրենի հողն էր պարարտացնում և վերամշակում. այն հողը, որը քիչ առաջ քար ու քանդ էր արել բարբարոս թշնամին: … Զարմանալի կենսունակություն և ձեռներեցություն ցուցաբերեց արևմտահայը, որ զարհուրելի տաժանքից հետո, պահել կարողացավ հայի բնածին հոգեկան արիությունը.[83]:

Շրջանային վարչության ջանքերով՝

– վերանորոգվեց գերմանական հյուպատոսարանի ընդարձակ շենքը՝ վերածվելով կենտրոնական հիվանդանոցի[84]:

– Ուշադրություն դարձվեց Վանա լճի ձկնորսարանների աշխատանքի վրա, որոնք վարձով տրվեցին մասնավոր կապալառուների՝ զորքին և ժողովրդին ձկնեղենով ապահովելու համար: Նախատեսվում էր զորքին հատկացնել 15.000, իսկ Կովկասի հայոց բարեգործական ընկերության պահեստին՝ 10.000 փութ աղ դրած տառեխ[85]: Արդյունքում՝ միակ բանը, որ կարելի էր առատ ճարել՝ Վանի տառեխն էր[86]:

– Վարձով տրվեցին խանութները, ճաշարանները և սրճարանները:

– Կապալառու-վարձակալների հետ պայմանագրեր կնքվեցին աղի, բորակի և առագաստանավերի կառուցման վերաբերյալ:

– Քաղաքների միության ներկայացուցիչ Կ. Համբարձումյանը ձեռնարկում է Այգեստանի արվարձանների և Թիմարի այգիների ու պարտեզների մշակումը, որի համար հատկացվում է որոշակի գումար: Դրանց օգտագործման համար հաստատվում են պայմանական ժամկետներ, որպեսզի հետագայում վերադարձող իսկական հողատերերի հետ թյուրիմացություն և անախորժություն տեղի չունենար:

– Մաքրվում են Այգեստանի բազմաթիվ աղբյուրները, ջրհորները և Շամիրամի ջրանցքը՝ ջուրը մինչև Շամիրամի թաղ հասցնելու համար: Միջոցառումներ են ձեռնարկվում նաև Տոնիի լճի վերաշինման ուղղությամբ[87]:

– Մշակվում է Կենդանանց գյուղի քարհանքը:

---

[82] *Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 25:*
[83] *Հ. ա վ. ք հ. Հ ա ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 418:*
[84] *Ս. Ս ա ր հ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 157:*
[85] *«Աշխատանք», 13. V. 1917:*
[86] *«Արև», 29. V. 1917:*
[87] *Ա. Հ ա ց ա գ ո ր ծ յ ա ն. նշվ. աշխ., էջ 217, նաև՝ «Աշխատանք», 13. V. 1917:*

– Ռուսների հետ ուսումնասիրվում են Բերկրիի Գործոթ գյուղի նավթահանքերը:

– Բոլոր գյուղերում կազմվում են գյուղական վարչություններ, որոնց պարտականությունն էր քննել գյուղի մեջ ծագած վեճերն ու անհամաձայնությունները[88]:

– Դեռևս 1915 թ. նախագծվել էր Շահթախթ–Իգդիր–Բաշիտաղա–Բայազետ–Սավալի–Վանա լճի հյուսիսային ափով՝ Առնիս, ռազմավարական նշանակության երկաթուղու կառուցման ծրագիրը: Սակայն այն իրականանում էր շատ դանդաղ: Նախատեսվում էր 1916 թ. աշնանը այն հասցնել մինչև Առնիս: Բայց 1916 թ. աշնանը ավարտվեց միայն 30 վերստ երկարությամբ հատվածը՝ մինչև Սավալի գյուղը: Երկաթգծի շինարարությանը 1917 թ. մասնակցում էին ինչպես հայերը, ասորիները և քրդերը (2–3 ռ. օրավարձով), այնպես էլ «գաղութարար» զինվորները[89]: Սակայն աշխատանքային անբարենպաստ պայմանների պատճառով երկաթգծի շինարարության ավարտը ձգձգվում էր[90]: «Այսպես խախուտ և քմահաճ հիմքերու վրա դրված աշխատանքի կազմակերպությունը կազմալուծվեցավ, ի վնաս բանվորերու և ի վնաս գործի հաջողության»[91]:

Երկաթուղու շինարարությանը զուգահեռ զարկ տրվեց նաև ճանապարհաշինությանը: Կառուցվեցին շուրջ 2000 կմ երկարությամբ մեծ խճուղիներ, որոնց մի մասը ձգվում էր մինչև Վան, Ախլաթ և Մանազկերտ[92]:

– Վերակենդանանում է նաև Վանի հոգևոր կյանքը. հունիսին Վան է ժամանում Վան–Ալաշկերտ–Խնուսի շրջիկ այցելու հովիվ, Ատրպատականի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը, որի նպատակն էր արևմտահայ սահմանադրական հիմունքներով մարմիններ կազմել Վանի ու շրջանների մեջ[93]: Նրա վերադարձից հետո Վանի առաջնորդական փոխանորդությունը ստանձնում է Եզնիկ վրդ. Ներկարարյանը: Շուտով, սակայն, կաթողիկոսը Ն. Մելիք-Թանգյանին է հանձնում նաև Վասպուրականի առաջնորդությունը[94]:

– Նորից Վան է ժամանում պրոֆ. Ն. Մառը, որն իր աշակերտների՝ Աշխարհաբեկ Քալանթարի, Ն. Ադոնցի, Հ. Օրբելու և Սմ. Տեր-Ավետիսյանի հետ 1917 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին պեղումներ է կատա-

---

88 *«Արև», 24. V. 1917:*

89 *«Արև», 15. VII. 1917, նաև՝ «Հայաստան», 1. XI. 1917:*

90 *ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 11, թ. 2, նաև՝ «Հայաստան», 10. XI. 1917:*

91 *«Հայաստան», 26. XI. 1917:*

92 *Կ. Սասունի. նշվ. աշխ., էջ 124–125:*

93 *«Հորիզոն», 15. VII. 1917:*

94 *«Արև», 7. X. 1917, նաև՝ Հ. Երամյան. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 436:*

ռում և խալդ-բիայնական արձանագրություններ հավաքում Թոփրակ-կալե-ռում, Զրմփ-Զրմփ Մաղարայում և Վանի բերդում:

– Միջոցներ են ձեռնարկվում «Աշխատանք» թերթի վերահրատարակման ուղղությամբ, կազմակերպվում է հանգանակություն և հավաքվում է 500 ռ.[95]:

– Վերաբացվում են դպրոցները: 1917 թ. Վան-Վասպուրականում գործում էին 18 (ըստ Իրազեկի՝ 16)[96] երկսեռ տարրական դպրոցներ, 3-ը՝ քաղաքում և 15-ը՝ գյուղերում[97]: Քաղաքի դպրոցները գտնվում էին Նորաշենում, Արարք-Կլոր-դարում և Քաղաքամեջում: Դպրոցներին հսկում էին Քաղաքների միության ներկայացուցիչ օրիորդ Աննա Քոշքարյանը և «Հայ գյուղատնտեսական ընկերության» պաշտոնյա Արմենակ Մաքսապետյանը[98]: Ընդհանուր առմամբ՝ դպրոցներում ուսանում էին 800 աշակերտներ[99]: Դպրոցները դասագրքերով ու գրենական պիտույքներով ապահովում էին նպաստամատույց ընկերությունները, որոնք բերում էին Երևանից ու Թիֆլիսից: Մայիսին 14 ուսուցչի մասնակցությամբ տեղի ունեցավ ուսուցչական համագումար, որն ընտրեց 3 հոգուց բաղկացած վարչություն: Վերջինս հարաբերություններ հաստատեց Երևանի արևմտահայ ուսուցչական ժամանակավոր Կենտրոնական վարչության հետ[100]:

Կրթական գործի վերաբերյալ հետաքրքրական է «Հորիզոն»-ի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Երկրի մեջ այս տարի կրթական-կուլտուրական կյանքը ավելի փայլուն շրջան ունեցավ, քան անցյալ տարիներուն: Վանի մեջ գոյություն ունեն մոտ 16 դպրոցներ: Դպրոցներ կան նաև երկրի ամեն մեկ անկյունը: Կան նաև որբանոցներ: Դպրոցական-որբանոցային հսկողությունը կգտնվի Արևմտահայ Խորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են գլխավորաբար, որ կվարեն գործը: Երկրի որոշ վայրերու մեջ բացված են նույնպես գրադարան-ընթերցարաններ: Մեկ-մեկ կպատահեն նույնպես երեկույթներ, ներկայացումներ և այլն»[101]:

– Որոշ վայրերում հիմնվում են որբանոցներ, ուր հավաքվում և խնամքով պահվում էին շրջանի որբերը[102]:

– Քրդաբնակ շրջանների հետ հարևանությունը Վանի շրջանը դարձնում էր առանձնահատուկ վտանգավոր: Հաճախակի էին խաղաղ բնակչության փոխադրամիջոցների և գումակների վրա ավազակախմբերի հարձակումները, անասունների հափշտակումները, բնակիչների ցանքսի և գույքի ոչնչացումը, ռուսական և տեղական վարչակազմի աստիճանավորների ու բնակիչների սպանությունները, հարձակումները ռուս զինվորների և կազակների վրա:

Հյուսիսից Վան-Վասպուրականին վտանգ էին սպառնում Զիլանի ձորում որջացած քրդերը, որոնք հանդիսանում էին բոլոր հարձակումների կենտրո-

---

[95] *,Արևե, 2. IV. 1917:*

[96] *Ա. Հ ա ց ա գ ո ր ծ յ ա ն. նշվ. աշխ., էջ 218, նաև՝ Յ. Ի ր ա զ ե կ. նշվ. աշխ., էջ 6:*

[97] *Ա. Հ ա ց ա գ ո ր ծ յ ա ն. նշվ. աշխ., էջ 218:*

[98] *Վասպուրական. 1915–1930, էջ 103:*

[99] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 1:*

[100] *«Աշխատանք», 13. V. 1917:*

[101] *Ս. Վ ր ա ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 25:*

[102] *Յ. Ի ր ա զ ե կ. նշվ. աշխ., էջ 6:*

նը: «Զիլանի քրդերը ճանճի նման հարություն են առել և սկսած Իգդիր Օրգովի փեշերեն մինչև Բերկրի, Ջանիկ համարյա կվխտան սպանություն, թալան անխուսափելի է. էլ ինչ կերպով մարդ հանդգնի Աբաղայի դաշտը կտրել ու երթևեկել»[103]: Զիլանի ձորի քրդերի հետ անմիջականորեն կապված էին Բերկրիի ու Նոշարի քրդական զանգվածները: Արևելքից, այսինքն՝ Արճակ–Մարայ գծի վրա, վտանգ էին ներկայացնում պարսկական սահմանագլխի ավազակախմբերը և Փաչան-Գարահիսարի շուրջ հավաքված քրդերը: Հարավից՝ Հայոց-Ձորը բաց դուռ էր Շատախի, Նորդուզի քրդական աշիրեթների համար[104]:

1917 թ. մայիսի 1-ին Վանի Շրջանային վարչության Գործադիր կոմիտեն և 50 հոգուց բաղկացած զինվորական ժողովը, հաշվի առնելով քրդական վտանգը, որոշում է. «Բանակի առաջխաղացման համար անհրաժեշտ է, որ բանակի թիկունքը և կողքերը թշնամիներու հարձակումներեն ազատ մնան, քանի որ թե մեր թիկունքը և թե կողքերը բազմաթիվ զինված քուրդեր կան պետական մոսիներով զինված՝ գեներալ Չերնազուբովի և Շախովսկիի շնորհիվ. պետք է նախ և առաջ թիկունքը գտնված քուրդերը զինաթափ անել, զենքի ընդունակներն անխտիր իբրև պատերազմական գերի նկատելով վերցնել և ուղարկել Կովկաս, իսկ անոնց ընտանիքներն ալ ուղարկել թուրքական բանակը»[105]: Միաժամանակ հեռագրվում է Թիֆլիս՝ Կովկասյան ճակատի զինվորական ընդհանուր հրամանատարին և IV կորպուսի հրամանատարին:

Քրդերի վայրագություններին և շահատակություններին վերջ տալու համար Վանի և Բայազետի զինվորական կոմիտեները համանման որոշումներ են կայացնում և հեռագրում ռուսական IV կորպուսի հրամանատարին. «Պատժախմբեր ուղարկել Զիլանի և Աբաղայի քրդերուն վրա ապահովելու համար 1. Երեք տարի ծառայող զինվորի տունը վերադառնալը, 2. Թրանսպորթներու փոխադրությունը և 3. Անզեն ժողովուրդի վերադարձը»[106]: IV կորպուսի հրամանատարն էլ հեռագրում է Վան, որ հայկական V գումարտակն ուղևորվի Զիլան՝ քրդերին պատժելու համար: Առնիսի ռուսական զինվորական պարետն տեղեկանալով, որ պատժախումբը հայկական գումարտակն է, իսկույն հեռագրում է IV կորպուսի հրամանատարին՝ «երբ հայերը պիտի գան քրդեր պատժելու, ինքը պատասխանատու չէ այդ շրջանի պահպանման, քանի որ հայերու երևումը քրդերուն պիտի կատաղեցնե»[107]: Այդուհանդերձ, պատժախումբը մայիսի 19-ին շարժվում է Արճեշ և Բերկրի:

Առնիսի մոտ՝ Սորեր գյուղում, տեղի է ունենում փոխհրաձգություն՝ Խուրշիդ բեկի «հավատարիմ» քրդերի և ռուսական զորքերի միջև, որի արդյունքում սպանվում է 4 զինվոր: Խուրշիդ բեկի տնից հայտնաբերվում է ռուս զինվորների անունով ուղարկված մեծ քանակությամբ պահածոներ, կրուպա, վերմիշել և կանացի թաշկինակներ, որոնք քրդերին էին նվիրել Բերկրիի ռուս պարետը և Քաղաքների միության պաշտոնյաները:

---

[103] *«Արև», 29. V. 1917:*
[104] *«Հորիզոն», 29. VIII. 1917:*
[105] *«Արև», 24. V. 1917:*
[106] *«Արև», 21. VI. 1917:*
[107] *Նույն տեղում:*

Ընդհարում է տեղի ունենում նաև Բերկրիում: Ծագումով գերմանացի Բերկրիի պարետը՝ Պետցոլդը, և օկրուգի հրամանատար Կոզիևը, միանալով Քաղաքների միության գթության քույրերին, որոնց մոտ ծառայում էին մեծ թվով քրդեր, հեռագրում են զանազան կողմեր՝ հայտնելով, որ հայերը կոտորում են քրդերին և պաշտպանություն խնդրում: Վանի Զինվորական կոմիտեի կողմից ուղարկված քննիչ հանձնախումբը իր գոհունակությունը հայտնեց հայկական V գումարտակի գործունեության համար և նշեց, որ գումարտակը գործել է իբրև պետական զինվորական միավոր՝ համաձայն ռուսական IV կորպուսի հրամանատարի հրահանգների[108]:

Փորձեր կատարվեցին նաև սիրաշահելու քրդերին ու բարեկամական հարաբերություններ հաստատել նրանց հետ: «Ավերակներու և դիակներու մեջ ուզեցինք մոռնալ երեկի արհավիրքներն և քուրտի վայրագությունները և անոնց բարեկամությունը ձեռք բերել»,– գրում է Արմենակ Մաքսապետյանը[109]: Աբաղայի Նազարավա գյուղում հանդիպում եղավ Բերկրիի խաղաղասեր քուրդ Կոպ Մահմադի որդու հետ[110]:

Քիչ չէին դեպքերը, երբ քրդերը հայտնվում էին Հայոց-Ձորում և սպառնում դաշտային աշխատանքին: Այսպես, հուլիսի 14-ին 100-ից ավելի զինված քրդեր հարձակվում են Վերին Հայոց-Ձորի Քռելի գյուղի վրա՝ կողոպտելով ամեն ինչ և առևանգելով 30 հայ գյուղացիների, որոնք լծված էին գյուղատնտեսական աշխատանքների:

Նկատի ունենալով հարցի լրջությունը՝ Վանի Շրջանային վարչությունը դիմեց տեղի զինվորական շտաբի պետին, խնդրելով, որպեսզի հարկ եղած ուժերով ապահովի Քռելի ու շրջակա 8 գյուղերի անվտանգությունը քրդական հարձակումներից և գյուղացիներին հնարավորություն տրվի հունձքը հավաքելու[111]:

Հուլիսին Շատախի Կատրը, Ջաֆար և Նորդուզի լեզգիները 1000 զինված ձիավորներով պատրաստություն էին տեսել անցնել Խոշաբի կողմերը՝ այնտեղից Վանի վրա հարձակվելու համար, որովհետև, ըստ քուրդ գերիների պատմածների, քուրդ բեկերը տեղեկացել էին, որ ռուսները Վանի մեջ քիչ ուժ ունեն: Ռուսական հրամանատարությունը 2 վաշտ ուղարկեց Խոշաբ: Հուլիսի 20–22-ին այնտեղ մեկնեցին նաև 80 ոստիկաններ, որոնք, ռուսական զինվորների հետ հետախուզումներ կատարելուց հետո, արգելեցին քրդերին իրենց ցանքսերը քաղել: Վանի կառավարության հաճությամբ ժողովրդի մի մասը Խոշաբ գնաց և ռուս զինվորների ու ոստիկանների հսկողության տակ այդ ցանքսերը քաղեց և փոխադրեց Վան: Իսկ հեռավոր վայրերի ցանքսերն այրվեց: Քրդերը հարձակումներ գործեցին Պհանց, Շեյխան, Տնտանս, Փութ, Խրկանիս, Ռապատիկ, Փաչան գյուղերի ուղղությամբ, բայց ապարդյուն: 10–12 օրյա կռիվների ընթացքում նրանք տվեցին 68 սպանված, 2 գերի, առգրավվեց 3 հրացան, 26 եզ, 12 ձի, 8 ջորի և 8 էշ[112]:

---

[108] *Նույն տեղում:*

[109] *Վասպուրական. 1915–1930, էջ 103:*

[110] *Նույն տեղում, էջ 104:*

[111] *«Հորիզոն», 3. VIII. 1917:*

[112] «*Արև», 24. VIII. 1917:*

Օգոստոսի 26-ին Խոշաբում տեղակայված ռուս զինվորները 30 ոստիկանների հետ հետախուզության են մեկնում Գարահիսարի կողմերը: Այդ վայրերում նախապես ամրացած տեղի և Խոշաբի քրդերը, վստահ լինելով իրենց անմատչելի դիրքերի վրա, հրաժարվել էին ենթարկվել ռուսական իշխանություններին: Ընդհակառակը, պատեհ առիթ ներկայանալուն պես, նրանք հարձակումներ էին գործում ռուսական հետախուզիչ խմբերի և հայերի վրա: Հետախուզական խումբը, քրդերին հնազանդեցնելու և Բաշկալեի ճանապարհը բացելու համար, գրավում է քրդական Ռապատիկ և Փաչան գյուղերը: Կռիվների ընթացքում սպանվում է 1 վաշտապետ, 6 զինվոր, 1 ոստիկան, վիրավորվում՝ 1 սպա և 9 զինվոր: Զինվորներն իրենց հետ բերում են 1000–1500 ոչխար ու տավար[113]:

Քիչ չէին նաև այն դեպքերը, երբ ռուս զորքին հպատակություն հայտնած քրդերը կազակների հետ մտնում էին հայկական գյուղերը և խուզարկություններ կատարում: Այսպես, Փանձ գյուղում, նրանք խուզարկել էին 8–10 տուն, ցուցակագրել էին դրանցում եղած իրերը իբր քրդերին պատկանող՝ հետագայում դրանք ստանալու նպատակով: Հայերն ընդդիմացել էին և այդ մասին հայտնել Շրջանային վարչություն[114]:

Խոշաբի քուրդ աղան, համագործակցելով Վանի Շրջանային վարչության հետ, կարևոր տեղեկություններ էր հաղորդել թուրքական զորքերի տեղաշարժի մասին:

Հայերի կողքին Վասպուրականի վերագրավված մասերում ապրում էին նաև փոքրաթիվ ասորիներ ու եզդիներ, որոնք հավասարապես վայելում էին հայկական ընկերությունների աջակցությունը:

Վանի տարածքը շարունակում էր մնալ ռուս-գերմանական ռազմա-դիվանագիտական հարաբերությունների ոլորտում: 1917 թ. օգոստոսի 28-ին երկուշաբթի առավոտյան գերմանական մի օդանավ թռիչք կատարելով և քառորդ ժամ պտույտ գործելով Վանի վրա գերմանական դրոշի հետ ռուսերեն և գերմաներեն լեզուներով գրված թռուցիկ թողնելով հեռացավ: Թռուցիկի բովանդակությունը հետևյալն էր. «Ռուս զինվորներ, լավ կանեք որ հաշտվեք, այժմ երկու միլիոն ռուս զինվորներ գերի են, Գերմանիայի մեջ և լավ կկերակրվին, Ռիգայի գավառամասերը տիրած ենք և Պետրոգրադն ալ իյնալու վրա է: Հույս մի դնեք Անգլիո և Ֆրանսիայի վրա, թե ձեզ պիտի օգնեն, նմանապես մի կասկածեք Ճաբոնիայեն և Չինեն, թե երբ ազատ հաշտություն կնքեք՝ ձեզ վրա պիտի հարձակին, չհավատաք այս լուրերուն, ձեզ վախեցնելու համար է: Մի քանի օրեն ալ այս ֆրոնտի վրա հարձակման պիտի դիմենք, բայց լավ կանեք որ չկռվեք»[115]:

Թռուցիկը ռուս զինվորների վրա էական հոգեբանական ազդեցություն չունեցավ:

Վան-Վասպուրականում կյանքը գնալով ավելի էր լավանում ու բարգավաճում: Վանում գտնվող ժողովրդի վիճակը 1917 թ. շատ ավելի լավ էր, քան Երևանում և այլ վայրերում տեղաբաշխված գաղթականների նյութական վի-

---

[113] *«Արև», 15. IX. 1917:*

[114] *«Արև», 15. IX. 1917:*

[115] *Նույն տեղում:*

ճակը: Շատ ընտանիքներ դուրս էին եկել չքավոր կյանքից, ձեռք էին բերել ապրուստի բարվոք պայմաններ, որովհետև մշակելի հողատարածությունները շատ էին, իսկ կյանքն էլ ապահով էր: Նույնիսկ Երևանից գալիս էին Վան և գյուղերից ցորեն տանում: Երկիր վերադարձողներն ազատվում էին նաև «տարագիր», «գաղթական», «հայ չէ, գաղթական է», «նա եռլականին (տեղացիներին) հավասար չէ» տարածում գտած ամոթալի պիտակներից: Երբ «եռլականներից» մեկը մահանում էր, ասում էին՝ «գաղթական չկար, որ դու մեռար» և այլն:

Վերաշինության ու վերակառուցման ձեռնարկումները նոր հունի մեջ էին դրվում և թափ ստանում: Ժամանակակցի բնութագրմամբ՝ «մոտիկ ապագայի հաջողության և երջանկության հույսերը հետզհետե մարդկանց տոգորում էին հավատքով և նրանց սրտերը լցնում էին ուրախության ցոլքերով»[116]:

Ահա թե ինչպես է «Արև» պարբերականը ներկայացնում կյանքի զարթոնքը Վանի մեջ. «Կյանքը սկսած է կամաց-կամաց վերակենդանանալ. օրը-օրին նորանոր դեմքեր կ՚երևին, թե քաղաքացիներեն և թե գյուղացիներեն: Օրը-օրին երկիր վերադարձողներու հոսանքը կուժեղանա: Կարավանն սկսած է շարժվել թե՛ Իգդիրից և թե՛ Պարսկաստանից: Օրական 20–30–50–100 հոգի քաղաք կիջնանեն: Եկողներու բացարձակ մեծամասնությունը գյուղացիությունն է, մեր երկրի աղը: Վերջապես ամեն օր նոր դեմքերու կհանդիպենք, որոնք առլեցուն հույսերով եկած են վերաշինելու իրենց հայրենի քանդված օջախները: Ոմանք բոլորովին վստահ իրենց հետ բերած են իրենց կինն ու երեխաները»[117]:

Այսպիսով, Վան-Վասպուրականը վերաշինվում էր, «հարություն էր առնում մոխիրների տակից»[118], իսկ ներգաղթողները պատրաստվում էին ապրել նոր կյանքով: Վասպուրականցին՝ քաղաքացին, գյուղացին, կուսակցական գործիչը և պաշտոնյան, հանդես բերեց զարմանալի կենսունակություն ու ձեռներեցություն՝ վերակառուցելու և վերակենդանացնելու կիսավեր ու քարուքանդ դարձած իրենց անչափ սիրելի Վասպուրականը: Ամենատաժանելի պայմաններում վասպուրականցին պահեց իր հոգեկան արիությունը, իր ձեռքը վերցրեց սեփական ճակատագրի տնօրինումը և կազմակերպեց իր հավաքական կյանքը:

ДЕЯТЕЛЬНОСТЬ РАЙОННОГО УПРАВЛЕНИЯ ВАНА
(Март–ноябрь 1917 г.)

АВЕТИС АРУТЮНЯН

Резюме

Февральская революция 1917 г. пробудила новые надежды среди западных армян. В мае 1917 г. в Ване было создано Районное управление, которое посте-

[116] *Ս. Սարհադյան. նշվ. աշխ., էջ 157:*
[117] *«Արև», 2. IV. 1917, 11. IV. 1917:*
[118] *Ս. Վրացյան. նշվ. աշխ., էջ 24:*

пенно взяло в свои руки власть в Васпуракане. Районное управление во главе с Костей Амбарцумяном осуществило ряд мероприятий, которые стали гарантом мирной жизни в Ване. В срочном порядке была разработана программа для переселившихся в Ван беженцев из Армении. На дорогах Игдир–Ван и Ван–Хой открылись столовые, больницы, аптеки, автомобильные станции и детские дома. В Ване была основана районная милиция, предпринимались попытки по организации армии. Проводились мероприятия, вследствие которых сельское хозяйство республики начало быстрыми темпами приходить в норму. Особое внимание было уделено таким сферам хозяйства, как рыболовство на озере Ван, нефтяные месторождения, очистка родников, садоводство, строительство железной дороги Баязет–Савали. Ожила также духовная жизнь. Проводились археологические работы в районе Вана, возобновилось издание газеты «Ашхатанк», открылись школы. Были предприняты попытки установить дружеские отношения с курдами.

THE ACTIVITIES OF THE REGIONAL ADMINISTRATION OF VAN (March–November 1917)

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

The February 1917 revolution awoke new hopes among the Western Armenians. There was established a Regional Administration in Van in May 1917. It gradually took in hands the governance in Vaspurakan. The Regional Administration under the guidance of Kostya Hambartzumyan undertook some measurements , that became strong guarantees of safe life in Van. A program of populating Van with emigrant Armenians was quickly developed. On the ways Igdir-Van and Van-Khoy food stations, hospitals, pharmacies, car stations and orphanages were opened. In May 1917 Van regional police was established. Measurements were undertaken for creation of constitute army. Some measurements were also undertaken , due to which the agriculture of the country began to revive quickly. Special attention was paid to the issue of lake Van fishery exploitation restart, also the salt mine and oilfield exploitation, cleaning of springs, garden cultivation, construction works of Bayazet-Savaly railway. Spiritual life was also revived. Archaeological works were implemented in the territory and surroundings of Van , the newspaper "Ashkhatank" was republished, schools were opened. Some attempts were also made to establish friendly relationships with the Kurds.